Տիգրան՝ որդի Արտաշիսի՛ ամս ԼԳ: Սա զՅունաց զօրսն կոտորեաց 'ի պատերազմի, և Բ. անգամ զՀռոմայեցի եկեալ զօրսն յաղթեաց, զԳաբրիայն փախոյց, զԿրասոս մեռոյց, զՄիհրդատ կալաւ, զՍամարիոյ և զԵրուսաղէմի Հրէայսն գերի վարեաց, զԹագաւորն Հիւրկանոս գերի էած, և զԱնտիոքոս Թագաւոր կացոյց 'ի Հրէաստան. Թագաւորեաց ամս՝ ԼԳ:

Արտաւազդ՝ որդի Տիգրանայ՝ պղերգութեամբ և որկրամոլութեամբ կեայր. վասն որոյ սպանաւ 'ի Թշնամեաց, Թագաւորեալ ամս՝ Բ:

Արշամ՝ եղբայր Տիգրանայ՝ որդի Արտաշիսի. մանկասպանն Հերովդէս Թագաւոր Հրէաստանի՝ խրոխտալ կամէր 'ի վերայ սորա՝ և յաղթեցեալ սատակեցաւ: Իսկ Արշամ խաղաղական կենօք կեայր և մեռաւ Թագաւորեալ ամս՝ Ի:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան